

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄԻՍ  
ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2014 թվականին անցկացվել են հետևյալ միջոցառումները.**

1. «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք», «Լավագույն մարզական բակ» ստուգատեսները:

Փետրվար ամսին ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան են ուղարկվել «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» ստուգատեսների կանոնակարգերը: Նախարարության կողմից ստեղծվել է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ քաղաքաշինության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների համապատասխան մասնագետները:

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կատարված ուսումնասիրությունների հիման վրա ամփոփվել են ստուգատեսների արդյունքները, և յուրաքանչյուր անվանակարգում երեք լավագույնները պարգևատրվել են ՀՀ Նախագահի մրցանակներով:

*1.1 «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ*

Անցկացվել է 4 տարիքային խմբով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 2006-2008 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ,

2) 2-րդ տարիքային խումբ՝ 2003-2005 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ,

3) 3-րդ տարիքային խումբ՝ 2000-2002 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ,

4) 4-րդ տարիքային խումբ՝ 1998-1999 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ:

Ծրագրում ընդգրկված են խաղային փոխանցումավազք՝ 30 մ, վարժություն բասկետբոլի գնդակով, պարանի ձգում, խաղային փոխանցումավազք թենիսի գնդակներով, հեռացատկ տեղից, խաղային փոխանցումավազք՝ 80 մ (15 մ + 25 մ + 40 մ), հրաձգություն օդամղիչ հրացանով մրցաձևերը:

1-ին փուլ՝ հունիսի 1-15-ը. ՀՀ մարզերի 42 քաղաքային համայնքներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջաններում և Երևան քաղաքի վարչական շրջաններում: Մասնակցել է 2067 ընտանիք, 6201 մարդ:

2-րդ փուլ՝ հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ը. մասնակցել են 1-ին փուլում հաղթած ընտանիքները:

3-րդ՝ եզրափակիչ փուլ՝ հուլիսի 21-27-ը, Ծաղկաձոր: Ներկա էր Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Մասնակցել է 144 ընտանիք (432 մարդ) և, առաջին անգամ, հաշմանդամ ունեցող 16 ընտանիք՝ (48 մարդ): Ընդամենը 160 ընտանիք, 480 մարդ:

Հաշմանդամ ունեցող ընտանիքների մրցույթի ծրագրում ընդգրկված են խաղային փոխանցումավազք՝ 30 մ, վարժություն բասկետբոլի գնդակով, խաղային

փոխանցումավազք թենիսի գնդակներով, խաղային փոխանցումավազք 80 մ (20 մ+ 20 մ + 20 մ), թենիսի գնդակի նետում, օղակների նետում նշակետին մրցածները:

Մրցույթի կանոնակարգի համաձայն յուրաքանչյուր տարիքային խմբում առանձին մրցածներից, ինչպես նաև ընդհանուր թիմային հաշվարկում, մրցանակային տեղ գրաված ընտանիքները պարգևատրվել են դրամական մրցանակներով, իսկ վերջիններս՝ նաև համապատասխան կարգի վկայագրերով:

Առաջին, երկրորդ և երրորդ տեղը գրաված՝ համապատասխանաբար Երևան քաղաքի, Շիրակի և Կոտայքի մարզերի թիմերը պարգևատրվել են գավաթներով:

*2. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում*

Ծրագրում ընդգրկված է 7 մրցածն՝ կշռաքարի բարձրացում, շախմատ, նարդի, կոխ, բազկամարտ, մինի ֆուտբոլ և մասսայական վազքարշավ 1000 մ:

Սեպտեմբերի 10-26-ը ՀՀ մարզերում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում անցկացված միջոցառումներին մասնակցել է 22000 մարդ: Մրցանակակիրները պարգևատրվել են Նախարարության հավաստագրերով և մրցանակներով, իսկ լավագույն համայնքները դեկտեմբերի երկրորդ կեսին պարգևատրվել են համապատասխան կարգի հավաստագրերով, շնորհակալագրերով և գավաթներով:

*3. Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում*

Ծրագրում ընդգրկված է 6 մրցածն՝ նոնակի նետում, 8 կգ ուսապարկով 4 x 50 մ փոխանցումավազք, ձգումներ պտտածողից, 1000 մ կրոսավազք, հրաձգություն օղանդիչ հրացանով, ինքնաձիգի քանդում-հավաքում: Մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտները, ընդ որում՝

1-ին փուլ՝ ներդպրոցական մասսայական մրցումներ (սեպտեմբեր), Հայաստանի Հանրապետության 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, մասնակիցների թիվը՝ 31.450 աշակերտ.

2-րդ փուլ՝ տարածաշրջանային և Երևան քաղաքի վարչական շրջանների մրցումներ (հոկտեմբեր).

3-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի առաջնություններ (հոկտեմբեր).

4-րդ՝ եզրափակիչ փուլ՝ Երևան քաղաքում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում (նոյեմբերի 2-5-ը):

Միջոցառման մրցանակակիրները բոլոր փուլերում պարգևատրվել են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ 4-րդ՝ եզրափակիչ փուլի մրցանակակիրները և թիմերը՝ գավաթներով և նվերներով:

4. «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով իրականացվում է պետական աջակցություն «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ

ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց ինքնադրսևորվելու և հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելուն: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նրանց տրամադրվող 9.000.000 (ինը միլիոն) ՀՀ դրամը, նշված հասարակական կազմակերպություններն օգտագործում են հանրապետությունում տարբեր տիպի մարզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև հաշմանդամային սպորտի միջազգային համապատասխան կազմակերպությունների կողմից անցկացվող պաշտոնական մրցումներին մասնակցելու համար (աշխարհի, Եվրոպայի առաջնություններ, վարկանիշային մրցաշարեր):

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2014 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

*«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն*

4.1 Խուլերի Հայաստանի Հանրապետության շախմատի առաջնություն, մայիս, 38 մասնակից՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Աբովյան, Մարտունի քաղաքներից:

4.2 Խուլերի Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի առաջնություն, հունիս, 42 մասնակից:

4.3 Խուլերի Հայաստանի Հանրապետության հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի առաջնություն, հունիս, 42 մասնակից:

4.4 Խուլերի Հայաստանի Հանրապետության ֆուտզալի առաջնություն, սեպտեմբեր, 67 մասնակից (6 թիմ Երևան, Վանաձոր, Մարտունի, Գյումրի, Աբովյան քաղաքներից):

*«Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություն*

4.5 «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնություն, մայիս, 40 մասնակից՝ Երևան, Վանաձոր, Ալավերդի քաղաքներից:

4.6 Հատուկ օլիմպիադաների Եվրոպայի ամառային խաղեր:

ՀՀ մարզական 5-հոգանոց պատվիրակությունը (2 մարզիկ, 2 մարզիչ, 1 պատվիրակության ղեկավար) մասնակցել է սեպտեմբերին Անտվերպենում (Բելգիա) կայացած Հատուկ օլիմպիադաների Եվրոպայի ամառային խաղերին: Սուրեն Առուստամյանը աթլետիկա մարզաձևում նվաճել է 2 բրոնզե մեդալ՝ 100 մ վազք և հեռացատկ:

*«Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն*

4.7 Հաշմանդամների 12-րդ հանրապետական մարզական փառատոն, հունիս, 113 մասնակից Երևան, Էջմիածին, Աբովյան, Արարատ, Արմավիր, Սպիտակ, Վանաձոր, Գյումրի, Տաշիր, Կապան քաղաքներից:

*«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն*

4.8 Կույր շախմատիստների ՀՀ առաջնություն, օգոստոս, 17 մասնակից՝ Երևան, Վանաձոր, Գյումրի, Արտաշատ, Էջմիածին, Արմավիր քաղաքներից:

5. «2014 թվականի Սոչիի ձմեռային պարաօլիմպիկ խաղերին մասնակցության ապահովում», ֆինանսավորումը 6,869.0 հազար դրամ:

Ծրագրի շրջանակներում ապահովվել է ՀՀ մարզական պատվիրակության մասնակցությունը մարտ ամսին Սոչիում (Ռուսաստանի Դաշնություն) անցկացվող

ձմեռային պարաօլիմպիկ խաղերին՝ 1 մարզիկ, 1 մարզիչ, 1 բժիշկ, 1 պատվիրակության ղեկավար:

6. «2014 թվականին Խորվաթիայում կայանալիք խուլերի շախմատի օլիմպիական առաջնությանը մասնակցության ապահովում», ֆինանսավորումը 8130,3 հազար դրամ:

Ծրագրի շրջանակներում ապահովվել է մարզական 8 անձից բաղկացած ՀՀ պատվիրակության մասնակցությունը հունիս ամսին Օպատիայում (Խորվաթիա) անցկացվող խուլերի շախմատի օլիմպիական առաջնությանը:

Հովանավորչական միջոցներով անցկացվող միջոցառումներ.

7. «Ուրախ մեկնարկներ» ընտանեկան մարզական խաղեր

Իրականացվել է մայիսի 7-ին «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության հետ համատեղ: Մասնակցել են ընտանիքի կազմում լսողության խանգարումներով անդամ ունեցող 12 ընտանիք (հայրը, մայրը, երեխան): Միջոցառման կայացմանը աջակցել է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը:

8. Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հարուկ կրթահամալիրի սաների մասնակցությամբ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության օրվան

Իրականացվել է հոկտեմբերի 14-ին Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի հետ համատեղ: Մասնակցել են 20 երեխա (10 աղջիկ, 10 տղա):

9. «Սպորտլանդիա-2014» մարզական միջոցառում Հայաստանի մանկատների և գիշերօթիկ դպրոցների սաների մասնակցությամբ

Իրականացվել է մայիսի 14-ին: Միջոցառմանը մասնակցել են Գավառի մանկատան, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N° 1 գիշերօթիկ հաստատության, Կոտայքի «SOS մանկական գյուղեր» հաստատության, երեխաների խնամքի և պաշտպանության Երևանի N° 1 և N° 2 գիշերօթիկ հաստատությունների սաները:

10. «Աբովյան» քրեակադրոդական հիմնարկում կանանց և անչափահասների շրջանում մարզական-մասսայական միջոցառում

Իրականացվել է մայիսի 23-24-ը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հետ համատեղ:

11. «Սպորտլանդիա-2014» զանգվածային մարզական միջոցառում նախադպրոցական տարիքի երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների միջև

Իրականացվել է Երևանի վարչական շրջաններում, ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի մարզերի համայնքներում: Միջոցառումն անցկացվում է 2 փուլով՝ համայնքային և մարզային: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 5964 նախադպրոցական և դպրոցահասակ երեխա:

Բացի զուտ մարզական միջոցառումներից՝ Նախարարությունը «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության հետ համատեղ տարբեր կազմակերպությունների հովանավորչական աջակցությամբ կազմակերպել և անցկացրել է հաշմանդամային սպորտի հիմնախնդիրներին նվիրված սեմինար-

խորհրդակցություն, որին մասնակցել են շահագրգիռ նախարարությունների, ինչպես նաև հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականների և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագրերին և ծրագրերի իրականացման միջոցառումների ցանկերին հավանություն տալու մասին» № 15 արձանագրային որոշման № 2 և № 4 հավելվածների միջոցառումների ցանկում ներառված միջոցառումներն արտացոլված են նաև Նախարարության 2015-2017 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտում:

Նախարարության 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտում առկա ծրագրերից բացի, ներառվել են 5 նոր ծրագրեր, ինչպես նաև «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի համար նախկին տարիներին հատկացվող 9.000.000 ՀՀ դրամի գումարի չափը 2017 թվականի համար նախատեսված է հասցնել 20.000.000 ՀՀ դրամի:

<b>Ծրագրի անվանումը</b>	<b>ՄԺԾԾ ՀԱՅՏ</b>		
	<b>2014 թ.</b>	<b>2015 թ.</b>	<b>2016 թ</b>
<i>ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ</i>	14 869,7	26 979,9	16 742,8
2014 թվականին Խորվաթիայում կայանալիք խուլերի շախմատի օլիմպիական առաջնությանը մասնակցության ապահովում	8.000.700	-	-
2014 թվականին Սոչիի ձմեռային պարաօլիմպիկ խաղերին մասնակցության ապահովում	6.869.000	-	-
2015 թվականին Թաիլանդում կայանալիք խուլերի ֆուտզալի աշխարհի առաջնությանը մասնակցության ապահովում	-	18.409.500	-
2015 թվականին Մոլդովայում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի պատանիների և մեծահասակների առաջնությանը մասնակցության ապահովում	-	8.570.400	-
2016 թվականին Ռիո Դե Ժանեյրոյի պարաօլիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	-	-	6.394.000
2016 թվականին Երևանում կայանալիք խուլերի շախմատի աշխարհի առաջնության անցկացման ապահովում	-	-	10.348.800

## 2015 թվականին անցկացվել են հետևյալ միջոցառումները.

1. Ապրիլ-մայիս ամիսներին հանրապետության մի շարք մարզերում արդեն իսկ իրականացվել են նախադպրոցական տարիքի երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների «Սպորտլանդիա» մարզական զանգվածային միջոցառումները, այդ թվում՝ Լոռու, Կոտայքի, Գեղարքունիկի և Արագածոտնի մարզերում: Միջոցառման մասնակից թիմերը պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ՀՀ մարզպետարանների համապատասխան կարգի հավաստագրերով և գավաթներով:

2. Մայիսի 7-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի մարզադահլիճում անցկացվեց «Սպորտլանդիա-2015» մարզական խաղեր միջոցառումը՝ Հայաստանի մանկատների ու գիշերօթիկ հաստատությունների սաների միջև: Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը մասնակցեցին Երևանի և հանրապետության մարզերի 10 մանկատների և գիշերօթիկ դպրոցների երեխաները: Մասնակից թիմերի կազմում էին 5 տղա և 5 աղջիկ, որոնք մրցեցին ծրագրով նախատեսված 6 տարբեր մրցաձևերում: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվեց Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության թիմը, 2-րդ տեղը գրավեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի մանկատան թիմը, իսկ 3-րդ տեղը՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի մանկատան թիմը: Հաղթողները պարգևատրվեցին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գավաթներով և հավաստագրերով, իսկ մրցույթի բոլոր մասնակից երեխաները ստացան նվերներ նախարարության, ինչպես նաև “Word Vision Armenia” կազմակերպության, Մանկական զարգացման հիմնադրամի և «Չանգակ» հրատարակչության կողմից:

3. «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը մայիսի 3-5-ն անցկացրել է հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի առաջնությունը, որին մասնակցել են 42, իսկ մայիսի 8-10-ը անցկացրել է ազատ ոճի ըմբշամարտի ՀՀ առաջնությունը, որին մասնակցել են 46 մասնակից:

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսական աջակցությամբ մայիսի 5-ին «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրի շրջանակում «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը անցկացրել է մտավոր սահմանափակումներով 12-15 տարեկան երեխաների միջև ֆուտբոլի մրցումներ: Մրցումներին մասնակցել են մտավոր խնդիրներ ունեցող հատուկ դպրոցների սաները՝ Երևանի N 12 հատուկ դպրոց, Դ.Դեմիրճյանի անվ. 27 դպրոց, Երևանի N 91 հատուկ դպրոց, 11 հատուկ օժանդակ դպրոց, Արմավիրի N 1 օժանդակ դպրոց և Վաղարշապատի N 2 հատուկ օժանդակ դպրոց: Հանդիպման ավարտին մասնակցության համար երեխաներին հանձնվել են պատվոգրեր:

5. Մայիսի 14-17-ը Երևանի շախմատի տանը անցկացվել է խուլերի Հայաստանի Հանրապետության շախմատի առաջնությունը (38 մասնակից՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Աբովյան, Մարտունի քաղաքներից):